ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

ՎԻԼԼԻԱՄ ԷՒԱՐՏ ԳԼԱԴՍՏՈՆ

Լոնդոն, 28 դեկտեմբերի (Նոր տոմար).

«Չը կայ ոչինչ աւելի մեծ, քան Գլադստոնի ոգին, եթէ ոչ նորա մարմինը», ասում է նորա անձնական բարեկամը. «և ոչինչ չը կայ աւելի մեծ, աւելացնում է մի ուրիշը, քան իւր մարմինը, եթէ ոչ նորա ոգին»։ Եւ այդ երկուսն էլ ասում են մի մարդու համար, որը վաղը ութսուն տարեկան է լինելու։ Թէ մենք նորա բարեկամներից ենք, թէ ոչ—մենք պէտք է նորա թէ ոգու. և թէ մարմնի արտակարգ լաստկութիւնները ընդունենք առանց ալլ և ալլութեան։ Մեր դարում չի եղել մի ուրիշ անգլիացի պետական մարդ, որը Անգլիայի քաղաքական դիրքին աւած լինի այնքան անձնական կնիք, որքան այս Great Old Man (մեծ ծերունին)։

Բայց այդ մարդը այսօր էլ մեռում է անդերադանցելի հռետոր, որպէս գրող և մասնագէտ դիտնական՝ նա նշանաւոր գործքեր է ստեղծել աւելի քան մի ճիւղում, «քաթունի գործերում, որպէս և կրթական գործում, գործարանական Մանչեստերում, որպէս և համալսարանական Օքսֆորդում, նա հաւասարապէս իւր տանն է զգում։ Նա գիտեցաւ միացնել անկեղծ ազնիւ հրճւանքը Իտալիայի վերակենդանութեան և Յունաստանի անկախութեան համար, խորը անգլիական հետաքրքրութեան հետ լունական Յանաէի չամիչի և իտալական փալասների մաքսային տարիֆի համար. դէպի իրան է գրաւում երկաթուղային վարչութիւնների ուշադրութիւնը, որքան եպիսկոպոսներինը։ Մի տիեզերական հանճար ցոյց տուեց իրան այն մարդը, որին այժմ տօնում է Անգլիայի ազատամիտ կուսակցութիւնը նորա ութսունամեակի առիթով։ Աւելի քան կէս դար իւր երկրացիների և օտարների ուշադրութիւնը գրաւել է դէպի իրան և դեռ ով գիտէ, գուցէ, չը նայած նորա խորը ծերութեան, ինչ դեր է վիճակւած նրան խաղալու այսուհետև։

Նորա հայրը մի լարգւած վաճառական էր, չոտլանդական ծագումից և հաստատուած Լիվերպուլ, ուր և ծնուեց Գլադստոնը 1809 թուականին։ Եւ

այդ երկու հանգամանքներն ևս, թէ չոլանդական արիւնը և թէ իւր հօր վաճառականական դիրքը լքցնում են նրան մի առանձին հպարտութիւնով, որը նա ամեն դէպքում արտայայտում է։ Դեռ ևս 1872 թուականին մի անգամ նա ասաց. «Ես չը գիտեմ, թէ ինչո՞ւ վաճառականութիւնը Անգլիայում չը պէտք է ունենայ իւր հին գերդաստանները, որոնք ուրախ լինէին սերնդից սերունդ կապ ունենալ առևտուրի հետ։ Ուրիշ երկիրներում այդպէս է եղած և ես լոյս ունիմ, թէ մեղանում էլ նոյնն է լինելու։ Ցխրալի է և գրեթէ խայտառակչութիւն է, որ այնպիսի գերդաստներ, որոնք առուտուրով են ձեռք բերել դիրք և կարողութիւն, դէպի նա երես են շուռ տալիս և նրանից, կարծես, ամաչում են։ Այդ, ի հարկէ, չի կարելի ասել եղբօրս կամ իմ մասին։ Նորա որդիքը գնում են նորա չաւղով և ես ուրախ եմ, որ կարող եմ ասել, թէ իմ որդեկրանցից մէկը իմ հօր և եղբօրս օրինակին է հետևում»։

Հայրը թէ լարգւած և թէ կարողութեան տէր մարդ էր, որը, պահպանողական կուսակցութեան պատկանելով, իւր որդուն, սորա տասներկու տարեկան հասակում, Իտոն'ի բարձր պահպանողական, արիստոկրատական դպրոցն ուղարկեց։ Եւ շատ պահպանողական էր նաև որդին, երբ նա, 1832 թուականին, ուրեմն դեռ ոչ լիովին 23 տարեկան հասակում, սկսեց իւր քաղաքական ասպարէզը։ Նորա գրաւիչ անձնաւորութիւնը, աշխատասիրութիւնը և ամենից առաջ նորա մեծ ճարտարախօսութիւնը ամենքի աչքը իւր վերայ դարձրին իբրև «անպայման անընկնելի տորիների (պահպանողականների) ապագայ յոյսը»։ Ինչպէս նոյնաժամանակ նորա մեծ հակառակորդը, Դիզրաէլին, ապագայ լորդ. Բիկոնսֆիլդը, իւր քաղաքական ասպարէզը սկսեց որպէս ամենադրոշմած դեմոկրատներից մէկը, իբր բարձր տորիների օրինակելի ներկայացուցիչ վերջացնելու համար, նոյնպէս և Գլադստոնը, որը հակառակ կարգով աստիճանաբար պահպանողականութիւնից հասաւ ազատամտութեան այն ծայրայեղ սահմանին, ուր չափաւոր ազատամիտները նրանից ջոկւեցին և Անգլիայի արմատական մեծ կուսակցութիւնը նորա մէջ իւր առաջնորդը ճանաչեց։

Որպէս Դիզրաէլին, նոյնպէս և Գլադստոնը իւր ամբողջ կեանքում մի վերին աստիճանի բեղմնաւոր գրող էր։ Եթէ առաջինի ֆանտաստական բնաւորութիւնը արտայայտւեց նրանում, որ դեռ ևս իբր մինիստրների նախագահ՝ նա բոմաններ էր գրում, երկրորդը, Գլադստոնը, իւր գրւածքների մէջ չօշափում է ոչ միայն հասարակաց կեանքի բոլոր ասպարէզները, այլ նա է մի և նոյն ժամանակ լեզուագիտութեան և բնութեան հետազօտող, աստուածաբան և հնագէտ, բոլորը մի անձնաւորութեան մէջ միացած. այո, հաղիւ թէ կայ մի գիտութիւն, որը նա ուսած չը լինի և որի նկատմամբ նա կարծում չը լինի թէ կարող է հաւասար կերպով խօսել։

Նորա ուսումնասիրութիւնները «Հոմերոսի և հոմերական դարի» մասին պատւի գիրք ստեղծեցին Անգլիայում այն բանաստեղծի համար, որ ցայսօր արհա-

մարհուած էր այդ երկրում։ Ոչ պակաս նշանաւոր է նորա ընդարձակ գըրուածքը „Juventus Mundi“. բայց աւելի քան հին դարերը հետաքրքրում են այդ զգայուն մարդուն մեր ժամանակուայ մեծ—մեծ, նաև փոքրիկ—խնդիրները, և դեռ այսօր անգլիական ամսագրերը չեն դուրս գալիս առանց որ նոցանից մէկը կամ միւսը, յաճախ նաև մի քանիսը միաժամանակ, Գլադստոնի գրչից բղխած մի յօդուած չը բերէին. Թէկուզ մի քննադատութիւն որ և է նշանաւոր ռոմանի։ Այո, նա հէնց այժմ գրականապէս չափազանց գործօն է, ինչպէս այդ միշտ լինում էր, երբ քաղաքականութեան անբարեպատեհութիւնը հրել է նորան դէպի ընդդիմադիր կուսակցութիւնը և նորան տուել է մի ակամայ ազատութիւն։

Բայց չը նայած այդ բոլոր բազմակողմանի գործունէութեան, այդ ծերունին ցոյց է տալիս մի առարկայի նկատմամբ մի եռանդ և գործունէութեան ուժ, որոնք մի միակ մարդու ուժերի համար—և մի երիտասարդ մարդու—միանգամայն բաւական կարող էին համարուել։ Այդ առարկան է՝ Իրլանդիայի հանգամանքների բարուոքումը. որը Գլադստոնը, ինչպէս յայտնի է, նորանով է ուզում յառաջացնել, որ այդ կղզուն նա մի որոշ չափով անկախութիւն է ուզում տուած լինել, մի սեպհական պարլամենտի ներքոյ. մի նախագիծ, որը հանդիպեց մեծ ընդդիմադրութեան ոչ միայն պահպանողական բանակում, այլ և իւր կուսակցութեան ամբողջ աջ թևի վերայ, և դորա մի քանի նշանաւոր մարդկանց կողմից։ Մի յայտնի շարժում հասարակաց կարծիքի մէջ նորա օգտին, յամենայն դէպս, նկատելի եղաւ. սակայն նա պէտք է տեսնէ՞ այդ վերանորոգութիւնը իւր կեանքի իրիկնաժամին և կամ երբ և իցէ նա պիտի կայանա՞յ,—ո՞վ կարող է այդ այսօր նախատեսել։

Իւր ծննդեան օրը Գլադստոնը անց է կացնում իւր գիւղական բնակարանում՝ Հաւարդէնում, Ֆլինտշիր գաւառում, ուր նա համեմատապէս աւելի առանձնակի կեանք է վարում և իւր սիրած պարապմունքներին անձնատուր լինում։ Այստեղ մօտիկ բնակւում է նաև իւր որդին իբր հոգևորական Հաւարդէնի եկեղեցու, ուր նաև հայրը, անգլիական գիւղական մեծերի սովորութեան համեմատ, յաճախ կարդում է աւետարանի բնագիրը. և թէ հեռուից, թէ մօտիկից գալիս են ծխականներ մեծ ուրախութեամբ, մեծ ծեր մարդու գեղահնչիւն ձայնին ականջ դնելու համար։ Այստեղ, Հաւարդէնի պարկում, նա անձնատուր է լինում իւր առանձին սիրոյ առարկային՝ ծառեր կտրելուն։ փայտ կտրողի հագուստով. և յամենայն դէպս չապիկի թևքերով և ի հարկէ առանց ամենքին յայտնի Գլադստոնի օձիքի, նա շրջում է իւր որդու հասարակութեան մէջ։ Բայց և առհասարակ նա սիրում է զւարթ բնութեան մէջ ազատ շրջել, որի շնորհիւ նա պահպանած է ցայժմ մի զօրեղ առողջութիւն։—Երանի՛ թէ այդ առողջութիւնը նա երկար պահպանի,—ահա այն ցանկութիւնը, որը նորա ոգևորուած կուսակիցները չեն կարող բաւականաչափ զօրեղ կերպով չ'արտայայտել։